ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

_____ 2020 թվականի N _____ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 194-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի «Հայաստանի Հանրապետության պետական մարմինների ծառայողական ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման մասին» N 194-Ն որոշման(այսուհետ՝ Որոշում)՝

1) N 1 հավելվածի 5^5-րդ կետում լրացնել նոր ժդ) ենթակետ հետևյալ բովանդակությամբ՝ «ժդ) Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը՝ 6 ծառայողական ավտոմեքենա:»

2) N 2 հավելվածի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

10.	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	7	1	6

3) N 2 հավելվածի 10.1 –րդ կետում «ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության կոմիտե» բառերը փոխարինել «Գիտության կոմիտե» բառերով:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Որոշման N 2 հավելվածի 11-րդ և 26-րդ կետերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Տեղեկանք-հիմնավորում

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի

Անհրաժեշտությունը

Սույն նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների հատկացման, շահագործման և սպասարկման պահանջից ելնելով:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

«Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» օրենքի համաձայն ՀՀ կրթության և գիտության, ՀՀ մշակույթի և ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունների միաձուլման և նոր՝ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ստեղծման հետևանքով ներկայումս նախարարության ծառայողական և սպասարկող ավտոմեքենաների ընդհանուր թիվը՝ 7-ն է, որից 5-ը՝ նախկին ՀՀ կրթության և գիտության, 1-ը՝ նախկին ՀՀ մշակույթի, և 1-ը՝ նախկին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություններին ամրացված:

Կարգավորման նպատակը

Սույն նախագծի ընդունմամբ կկարգավորվի Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը՝ սահմանելով 1 և սպասարկող ծառայողական ավտոմեքենաների սահմանաքանակը՝ սահմանելով 6 :

Տեղեկանք

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջացնի:

ՏԵՂԵԿԱՆՔ

Կառավարության «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին:

Առարկության, առաջարկության հեղինակ, գրության ստացման ամսաթիվ, գրության համար	**Առարկության, առաջարկության բովանդակություն**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխություններ**
1	2	3	4
1. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն **13.02.2020թ. հ. ՍՊ/21.1/3859-2020**	Առաջարկվում է. 1. Նախագծի նախաբանից հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը: 2.Նախագիծը համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 11-րդ հոդվածի պահանջներին	1.Ընդունվել է 2.Ընդունվել է	1.Խմբագրվել է 2.Խմբագրվել է

2. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն **17.02.2020թ. հ. 1/16. 1/796-2020**	Առաջարկություններ և առարկություններ չունի		
3. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն **17.02.2020թ. հ. ՍՊ//4226-2020**	Առաջարկվում է. 1.Նախագծի նախաբանում հղում կատարել նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածին: 2.Նախագծի 1-ին և 2-րդ կետերի հիմքով փոփոխության ենթարկել նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման Հավելված N 2-ի «Ընդամենը» տողի համապատասխան սյունակները:	1.Ընդունվել է 2.Չի ընդունվել քանի որ սյունակների հանրագումարները ճշգրիտ չեն:	1.Խմբագրվել է
4. Ֆինանսների նախարարություն **18.02.2020թ. հ. 01/11-1/2116-2020**	Առաջարկվում է. նախագծում նախատեսել կետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման 1-ին կետի «ա» ենթակետով հաստատված Կարգում լրացում կատարելու մասին, որով կսահմանվի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը սպասարկելու համար հատկացված ծառայողական ավտոմեքենաների թվաքանակը (6 ավտոմեքենա):	Ընդունվել է	լրացվել է նոր ժդ) ենթակետ

5.Արդարադատության նախարարություն **19.03.2020թ. հ. 01/27.0.01/5773-2020**	**ՊԵՏԱԿԱՆ ՖՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ** **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ** 1. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման մեջ լրացում և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 1-ին կետի 2-րդ ենթակետում «Կրթության» բառից առաջ անհրաժեշտ է լրացնել «ՀՀ» բառը՝ նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետով հաստատված N 2 հավելվածի դրույթները: 2. Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետում «10.1-րդ կետում» բառերից առաջ անհրաժեշտ է լրացնել «N 2 հավելվածի» բառերը:	1.ընդունվել է 2.ընդունվել է	1.Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետում լրացվել է «ՀՀ» բառը 2.Նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետում «10.1-րդ կետում» բառերից առաջ լրացվել

			«N 2 հավելվածի» բառերը
6.Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն **31.03.2020թ. հ. ՍՊ/21.1/8927-2020**	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» Կառավարության որոշման նախագծի(այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չունի: Միաժամանակ հայտնում ենք, որ Նախագիծը քննարկվել է Պետական գույքի կառավարման կոմիտեի հետ: Վերջինս նույնպես հայտնել է, որ առաջարկություններ և դիտողություններ չունի		